

Կարեն Բոթոյանն ընդունել է Բելառուսի Ներկայացուցիչների պալատի փոխնախագահին

21.11.2017

Նոյեմբերի 20-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանն ընդունել է Հայաստանի Ազգային Ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի ուղեկցությամբ Գեղարքունիքի մարզ այցելած Բելառուսի Ազգային Ժողովի Ներկայացուցիչների պալատի նախագահի տեղակալ Բոլեսլավ Պիրշտուկին: Ողջունելով բարձրաստիճան հյուրին՝ Կարեն Բոթոյանը նշել է, որ հաշվի առնելով հայ-բելառուսական միջպետական հարաբերությունների բարձր մակարդակը, տեսանելի է նաև երկու երկրների տարբեր վարչական միավորումների միջև առանձին ոլորտներում կապերի աշխուժացման հնարավորությունը, հավելելով, որ չնայած այս առումով արդեն կա կատարված աշխատանք, այնուամենայնիվ առկա է այն խորացնելու դեռևս չօգտագործված հնարավորություն: Մարզպետը մասնավորապես խոսել է գյուղատնտեսության, զբոսաշրջության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում հնարավոր համագործակցության մասին:

Պատասխան խոսքում Բոլեսլավ Պիրշտուկը շնորհակալություն է հայտնել Կարեն Բոթոյանին ջերմ ընդունելության համար և նշել, որ նման ձևաչափի հանդիպումները շատ արդյունավետ են երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման և խորացման տեսանկյունից: Կողմերը քննարկել են նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր ևս, ինչպես նաև ձեռք է բերվել պայմանավորվածություն ուսումնասիրել և ընտրել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող կոնկրետ ոլորտներ և դրանց ուղղությամբ ավելի առարկայական համագործակցություն ծավալել: